ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/832 «20» 07 2018թ.

«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՔԱՐՅԱՆԻՆ
(ք. Երևան, Ազատության նրբ.4/75)

Հարգելի պարոն Զաքարյան

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառված «Մեծ Հիմք» ԱԿ-ն 26.01.2018 թվականից հանվել է ցանկից՝ ժամկետի լրացման հիմքով, օրենքով սահմանված կարգով վերջինիս հետ կնքել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/44, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46-2, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/55 և ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56 ծածկագրերով գնման պայմանագրեր:

Հետագայում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում կատարած համապատասխան փոփոխությունների արդյունքում պարզվել է, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ն չի հանվել ցանկից, այլ ներառված է մինչև 25.07.2020 թվականը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը, ինչպես նաև պայմանագրերի 8.3 կետերը որի համաձայն պայմանագրով սահմանվում է, այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության, կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, միակողմանի, մասնակի՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/44 ծածկագրով Պայմանագրի չկատարած մասի՝ 19222657 (տասնինը

միլիոն երկու հարյուր քսաներկու հազար վեց հարյուր հիսունյոթ, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46-2 ծածկագրով Պայմանագրի չկատարած մասի՝249593 (երկու հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր իննսուներեք), ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/55 ծածկագրով Պայմանագրի չկատարած մասի՝ 9452214 (ինը միլիոն չորս հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր տասնչորս) և ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56 ծածկագրով Պայմանագրի չկատարած մասի՝ 23417954 (քսաներեք միլիոն չորա հարյուր տասնյոթ հազար ինն հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Գ. ՉԹՐՅԱՆ

Կատ. Գ. Հուրոյան
Հեռ 011 514 194